Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

‹‹Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման հմտությունների զարգացման ապահովում›› ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Ոսկեվանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Թեմա՝ <<Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում >>

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Մամյան

Բովանդակություն

1. Ներածություն 3

2 Թեմայի արդիականությունը ……..3

3 Ի՞նչ է մեթոդը, որո՞նք են ակտիվ մեթոդները….4

4 Գրական ակնարկ ……11

5 Փորձարարական մաս……12

6 Վերլուծություն……..15

7 Եզրակացություն……17

8 Առաջարկություն……..18

9 Օգտագործված գրականություն և հղումներ…..19

Ներածություն

« Գիտության յուրաքանչյուր մեծ ձեռքբերում բխում է երևակայության նոր հանդգնությունից »

Ջոն Դյուի

1.1 Թեմայի արդիականությունը

Կրթությունը կյանքի նախապատրաստություն չէ, կրթությունը հենց կյանքն է: Կրթության որոշակի դրսևորման «տուն» է հանդիսանում դպրոցը, որտեղ այն մատուցվում է դասապրոցեսի ընթացքում ՝ մանկավարժի կողմից: Ուստի կարելի է դասը համարել մանկավարժական գործընթացի «բջիջ»:

21-րդ դարի մտածողության գլոբալիզացիայի պայմաններում կրթության ոլորտը ևս ենթարկվում է փոփոխությունների: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Հարկ է ուսուցման ռազմավարությունը փոխարինել զարգացման ռազմավարությամբ: Այսօր պետք է ձգտել ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն ստեղծի առ կրթություն, իսկ դրա համար ուսուցման պրոցեսը պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն,բավարար չէ միայն բովանդակության մատչելի ներկայացումը:Անհրաժեշտ է օգտագործել մեթոդներ ,որոնց օգնությամբ սովորողը կամա, թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից: *Հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը՝ պետք է կարողանալ այնպիսի մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր դասի, որ աշակերտի մոտ առաջանա հետաքրքրություն:Այս դեպքում մեզ օգնության են գալիս ուսուցման մեթոդներն ու հնարները:Պետք է նշել,որ բոլոր մեթոդները չէ,որ կարելի է կիրառել բոլոր դասերին :Ուսուցիչը պետք է ստեղծագործաբար մոտենա յուրաքանչյուր մեթոդի:*

Հետազոտության նպատակը՝

Ուսումնասիրել ակտիվ մեթոդների կիրառմամբ աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացումը 5-րդ դասարանում**:**

Հետազոտական հարց՝

Արդյո՞ք ժամանակակից ակտիվ մեթոդների արդյունավետ կիրառությունը մեծացնում է երեխաների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Հետազոտության խնդիրները՝

- Կիրառել ակտիվ մեթոդները դասի տարբեր փուլերում:
- Ընտրել առավել արդյունավետ մեթոդ(ներ)ը դասի տարբեր փուլերում:
- Դիտարկել մեթոդի կիրառման և ժամանակի միջև եղած կապը:

Ի՞նչ է մեթոդը

Մեթոդը, թերևս, կենսական բաղադրիչ է արդյունավետ և ստացված դասի համար:

«Մեթոդ» ՝ ճանապարհ դեպի հետազոտություններ կամ գիտելիքներ, ուղի (հին հունարեն): Մեթոդները այն հնարքներն ու միջոցներն են, որոնք ուղղված են

<< օբյեկտի >> ուսումնասիրությանը, այսինքն՝ «մեթոդ» նշանակում է նպատակին հասնելու միջոց,եղանակ:

Մեթոդը բանալի է,որով կարելի է բացել ցանկացած տեսակի գիտական դուռ:

Գոյություն ունեցող ավանդական և նորարարական ուսուցման գործընթացում մեթոդները բազմաթիվ են: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում, այն հիմնված է բացատրական-ցուցադրական մեթոդի վրա: Այս միատոն գործողությունը կարող է հանգեցնել ժամանակակից սովորողի ձանձրույթին, և որպես արդյունք կարող են անտեսվել սովորողի մի շարք որակական հատկանիշներ ,որոնք նրան կմղեին ինքնազարգացման:

Նորարարական (ժամանակակից) մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ , անմիջական մասնակցությունը: Հետևաբար «ուսուցման մեթոդ» հասկացությունն արտացոլում է՝

1. Ուսուցչի դասավանդման մեթոդները և երեխաների կրթական աշխատանքի մեթոդները նրանց հարաբերություններում :

2. Տարբեր ուսումնական նպատակների հասնելու իրենց աշխատանքի առանձնահատկությունները:

Եթե փորձենք ևս մեկ անգամ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի և աշակերտի համագործակցությունն է ՝ ուսումնական նպատակներն իրականացնելու համար: Այսպիսով՝ ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Բայց մեթոդների իմացությունը բավարար չէ ուսուցումը արդյունավետ իրականացնելու համար: Շատ կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունն ու կիրառելու կարողությունը: Իսկ արդյո՞ք անհրաժեշտ է հրաժարվել ավանդական ուսուցման մեթոդներից և օգտագործել միայն արդիականը, հստակ ոչ ոք չի կարող ասել,քանի որ դասավանդման լիարժեք «դեղատոմս» գոյություն չունի:

Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում բավականին կարևոր նշանակություն ունի : Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- Աշակերտը նյութը սովորում է ինչ որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի:
- Աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը:
- Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար:
- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ:

- Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը:
- Ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Այսպիսով ,ուսուցման պրոցեսում տարբերվում են դասավանդման 3 մեթոդներ `

1. Պասիվ `ուսուցիչ - աշակերտ,
2. Ակտիվ՝ ուսուցիչ - աշակերտ -ուսուցիչ,
3. Ինտերակտիվ ` ուսուցիչ- աշակերտ- աշակերտ - ուսուցիչ:

«Ակտիվ մեթոդ» անվանման հիմքը անգլերեն «action» -«փոխազդեցություն » բառն է: Ակտիվ մեթոդները ուսուցման գործունեության մեջ հիմնված են ուսուցիչ - աշակերտ



համագործակցության վրա, այսինքն նրանք հավասարապես մասնակցում են դասապրոցեսին:

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ:

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում,
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Վերոնշյալ մեթոդների նպատակն է բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումը գիտելիքների յուրացման, հմտությունների ձևավորման համար:

Հետազոտությունները ցույց են տալիս,որ

- կարդում եք ինչ-որ բան՝հիշում եք 10%,
- լսում եք ինչ-որ բան՝հիշում եք 20%,
- տեսնում եք ինչ-որ բան ՝ հիշում եք 30%,
- տեսնում և լսում եք ինչ-որ բան՝հիշում եք 50%,
- ինքնուրույն անում եք ինչ-որ բան՝հիշում եք 90%:

Ուսուցման ակտիվ մեթոդներ

Ուսուցման ակտիվ մեթոդները ապահովում են ակտիվություն, զարգացնում են մտածողությունը, հեշտացնում հիշելը, առաջացնում են հետաքրքրություն տվյալ առարկայի նկատմամբ: Արդյունքի հասնելու համար պետք է ճիշտ ընտրել ակտիվացնող մեթոդը: Դրա համար պետք է լավ ուսումնասիրել թեման ,առանձնացնել դասի նպատակները՝ դրանց մեջ նշելով նաև ակնկալվող արդյունքները:

Ակտիվ մեթոդները ուսուցման գործընթացում ունեն բազմաֆունկցիոնալ նշանակություն: ՈՒստի, ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման

գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Ժամանակակից կրթության մեջ կիրառվում են բազմաթիվ ակտիվ մեթոդներ և մեթոդական հնարներ, ինչպիսիք են, օրինակ `

- «Բառի տոհմածառը»,
- «Կարուսելը»,
- «ԹԽԱ-ն (թվարկել-խմբավորել-անվանել)»,
- «Մտագրոհը»,
- «Մեկ բառով ամփոփումը» (փոքր թեմաների ամփոփման ժամանակ աշակերտը գրում է մեկ թեման ամփոփող մեկ բառ,2-3 նախադասությամբ բացատրում,թո ինչու է ընտրել այդ բառը),
- «Մարմնի ուրվագիծը»,
- «Քարտեզագրումը»,
- «Ապագայի անիվը»
- «Դերային խաղը»,
- «Ժեստային ներկայացումը»
- և այլն:

Sարրական և միջին դասարաններում օտար լեզուների ուսուցման մեթոդների վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տեսակետներ: Բոլոր դեպքերում կասկածից վեր է, որ ուսուցման մեթոդներ ընտրելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել երեխաների ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները, կիրառել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք համապատասխանում են սովորողների տարիքին և հետաքրքրություններին:Ուսուցման լավագույն հնարներից են ուսուցողական խաղերը կամ խաղային վարժությունները :Այդ պայմաններում հեշտությամբ հաղթահարվում է օտար լեզվով հաղորդակցվելու հոգեբանական պատնեշը:

Տարրական դասարաններում (ինչպես նաև 5-րդում) անգլերեն լեզուն յուրացնելու հիմնական խնդիրներն են՝

- տառերի և հնչյունների համապատասխանության յուրացում,
- կարդալու հմտությունների ձևավորում,
- կարդալու միջոցով հաղորդակցական կարողությունների ձևավորում :

Որպես առավել մատչելի և նպատակահարմար մեթոդներ կարելի է առանձնացնել մի քանիսը:

«Ընդունելություն աչքի բժշկի մոտ»…….

Ուսուցիչը հայտարարում է, որ ստուգելու է երեխաների «տեսողությունը»:Ցույց տալով այս կամ այն տառը (տառամիացությունը)՝ «բժիշկը» խնդրում է արտասանել այն: Հետո «բժշկի» դերը կարող են ստանձնել երեխաները:

«Ո՞վ է ավելի արագ»……

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Մի խմբին տրվում են քարտեր,որոնց վրա գրված են բառերի առաջին մասերը: Մյուս խմբի քարտերին գրված են քարտերի երկրորդ մասերը: Ուսուցչի հրահանգից հետո երկու խմբի անդամները փորձում են գտնել իրենց «կեսը» և կողք կողքի դնելով քարտերը ՝ կարդում են ամբողջական բառը:

Օրինակ ՝

Fire	Man	fireman
Colour	Ful	colourful
Class	Mate	classmate

«Դարակից թափված տառեր»…….

Նախապես տառերի կտրտված բառերը խառնվում են իրար,հետո ուսուցիչն առաջարկում է երեխաներին հավաքել բառերը:Երեխաները վերականգնում են և բարձրաձայն արտասանում:

Օրինակ՝ b l t a e ___ table

u h o s e ___ house

«Խառնված բառեր»……

«Ինչ որ մեկը կտրատել էր նախադասության բառերը, որպեսզի Բուրատինոն կարդալ չիմանա, օգնենք նրան հավաքել նախադասությունը»,-ասում է ուսուցիչը:

Երեխաները փորձում են վերականգնել նախադասությունները:Օրինակ՝

eats Mariah apple an often

Mariah often eats an apple.

«Խճանկար -jigsaw»……

Դասարանը բաժանել խմբերի, ամեն խմբին տալ մի հատված, օրինակ՝ «reading» – ից, որտեղից սովորողները պետք է հանեն օրինակ՝

. անծանոթ բառեր,

. կամ գոյականներ,

. կամ ածականներ,

. կամ բայեր:

6. Շրջագայություն պատկերասրահում /galary walk/…..

Որևէ թեմայից երեխաները բերում են տեղեկատվություն տարբեր առարկաներից, օրինակ՝ աշխարհագրությունից ,հայտնի մարդկանցից, մշակույթից և այլն: Սովորողներին բաժանում ենք խմբերի :Աշակերտները ինֆորմացիան փակցնում են դասասենյակի տարբեր անկյուններում: Մյուսները մոտենում , կարդում են և գրում.

օրինակ՝ 2 հարց, որ կտային պատրաստողին կամ 2 բան ,որ սովորեցին:

Գրական ակնարկ

«Յուրաքանչյուր երեխա մի աշխարհ է՝միանգամայն բացառիկ է ու եզակի»:

Վ. Ա. Սուխոմլինսկին :

Սուխոմլինսկին ստեղծել է մարդասիրական սկզբունքների վրա հիմնված մանկավարժական յուրօրինակ համակարգ, որի կենտրոնում երեխան է, և դաստիարակության ու ուսուցման գործընթացները նպատակաուղղված են նրա անձի զարգացմանը*: Նա մտածում էր, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է դասի գնա մեծ բավականությամբ: Իսկ այ աշակերտն ամեն կերպ պետք է ոչ թե ձանձրանա* դասի ընթացքում ,այլ դրսևորի խանդավառություն, հուզմունք, ինչը նա կարող է ունենալ առաջադրանքի կատարումից, դժվարության հաղթահարումից, մտքի փոքրիկ հաղթանակից:

Իսկ ինչպե՞ս հաղթահարել «քար անտարբերությունը»: Այն կարելի է միայն հաղթահարել հավատալով հաջողությանը: Սուխոմլինսկին դասեր էր անցկացնում անտառում, գետի մոտ, դաշտում: Նա փնտրում էր դասավանդման այնպիսի մեթոդներ, որ աշակերտը ցանկություն ունենա սովորելու ու դա պետք է ուղեկցվի հետաքրքրությամբ: *Հետաքրքրությունը պահպանվում է հաջողություններով, դեպի հաջողություն տանում է հետաքրքրությունը,* իսկ առանց հաջողության, առանց դրանց նկատմամբ տարած հաղթանակի բերկրալից ապրումների չկա հետաքրքրություն, չկա ընդունակությունների զարգացում, չկա ուսուցում, չկա գիտելիք: Վ.Ա.Սուխոմլինսկու ամբողջ մեթոդիկան ուղղված է մի բանի՝ մեծացնել երեխայի մտավոր աշխատանքի բաժինը, նրա ուղեղին ստիպել սովորեցնել աշխատել, երեխայի մեջ սեր արթնացնել դեպի մտավոր աշխատանքը, դեպի մտքի աշխատանքը:

19-րդ դարի ականավոր դեմոկրատ մանկավարժներից մեկը՝ «գերմանացի ուսուցիչների ուսուցիչ» Ադոլֆ Դիստերվեգի համար *«Ամեն մեթոդ վատ է,եթե աշակերտին ընտելացնում է հասարակ ընկալման կամ պասիվության, և լավ է, եթե նրա մեջ ինքնագործունեություն է արթնացնում»: Նա մանկավ*արժ էր, ով նորարարության կողմնակից էր և պայքարում էր ուսուցման դոգմատիզմի դեմ:

Դիստերվեգը ուսուցման որևէ մեթոդի արժեքը որոշում էր նրանով, թե որքանով է այն օգնում աշակերտի մտավոր ուժերի արթնացնում է աշակերտների մտավոր ուժերը: Դիստերվեգի մշակած զննման ուսուցման մեթոդիկան զգալիորեն ընդլայնել և հարստացրել է ռուս դեմոկրատ, մանկավարժ, գիտական մանկավարժության հիմնադիր Ուշինսկին:

Ելնելով սովորողի տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից, նա մեծ նշանակություն է տալիս *զննական* մեթոդի սկզբունքին: «Երեխան մտածում է ձևերով, գույներով, ձայներով...ուստի անհրաժեշտ է զննական ուսուցում, որը կառուցվում է ոչ թե վերացական, այլ երեխայի կողմից անմիջականորեն ընկալվող պատկերների վրա»,- գրել է նա:

Ուշինսկին մատնանշել է երեխաների պատկերներով, նկարներով պատմելու կարևորությունը, դրա զարգացումը:

Ջոն Դյուին հայտնի ամերիկացի փիլիսոփա, հոգեբան և մանկավարժ էր, ով ևս կողմնակից էր ուսուցման գործընթացում սովորողի ակտիվ ներգրավված լինելուն:

Դյուին «անելով» սովորելու կողմնակիցն էր: Այս մոտեցումը հայտնի է նաև որպես «փորձառական» ուսուցում: Նա նկատել է, որ երեխաները ակտիվ ներգրավված

լինելու ժամանակ ավելի լավ են սովորում, քանի որ կլանված են ներկայով, այլ ոչ թե հեռավոր ապագայով: Օրինակ՝ երբ կենսաբանության դասին ո՛չ թե կարդում են, այլ բույս են աճեցնում, հավաքում բերքը մրգերի տեսքով, հետո կերակրում դրանցով խխունջներին, հետևում, թե ինչ է կատարվում: Արդյունքում գրի առնելով տեսածը և սովորածը աշակերտները հարուստ փորձ են ձեռք բերում, քննարկումների միջոցով նրանք նրանք սովորում են ձևակերպել սեփական մտքերը :

Դյուիին կարծում էր, որ մեթոդի խնդիրը փաստորեն հանգում է այն հարցին, թե ինչ կարգով է ընթանում երեխայի կարողությունների և հետաքրքրությունների զարգացումը: Նյութը ներկայացնելու և մատուցելու կարգը հենց երեխայի բնույթում դրված կարգն է:

Փորձարարական մաս

Դաս 1

Դասարան -5-րդ

Ուսուցիչ՝ Հասմիկ Մամյան

Առարկա -անգլերեն

Թեման- Professions (մասնագիտություններ)

Դասի տիպը ՝ Ամրապնդման դաս

Դասի նպատակը՝

1.երեխաների մոտ ձևավորել պատկերացումները մասնագիտությունների մասին,

2. ներկայացնել “մասնագիտություններն” անգլերենով,

3. զարգացնել պատկերավոր մտածողություն թեմայի շուրջ,

4.հարստացնել բառապաշարը,

5.ձևավորել կարճ նախադասություններ կազմելու հմտություն:

Խնդիրները՝

Ամրապնդի նոր բառերի ճիշտ գրությունն ու սահուն արտասանությունը, զարգացնի կապակցված խոսքը:

Մեթոդներ՝

- «Նկարիր ինքդ»,

- «Ավելորդ բառ»,
- «Դերային խաղ»:

«Նկարիր ինքդ» - Յուրաքանչյուր գրատախտակին մոտենում է մեկական աշակերտ, նկարում որևէ մասնագիտություն ներկայացնող նկար:Մյուս աշակերտները փորձում են կռահել նախ բանավոր,ապա տվյալ մասնագիտությունը գրել նկարի տակ:

«Ավելորդ բառ» - Ուսուցիչը գրում է մասնագիտությունները և մեկ այլ բառ, որը թեմային չի վերաբերվում: Աշակերտները հերթով մոտենում և փորձում են գտնել ու ընդգծել «տարօրինակ» բառը:

«Դերային խաղ» –ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է «ուսուցիչ»: Վերջինս սկսում է ստուգել դասընկերների տնային առաջադրանքը, կատարել համապատասխան նշումներ, տալիս է ցուցումներ, իսկ մյուսներն էլ կատարում են իրենց դիտարկումները: Արդյունքում միմյանց ուղղումներ անելով սովորում բացթողումները:

Վերջնարդյունք՝

իմանա մասնագիտություններն անգլերենով,

կարողանա կատարել վարժություն ֆիքսված թեմայով:

Վերլուծություն ՝

Դասը սկսեցինք անգլերենով օրվա փոքրիկ նկարագրությամբ: Աշակերտներից մեկին ուսուցիչ կարգեցի / ի դեպ՝ նա շատ արագ մտավ դերի մեջ/ : Կատարվեց տնային առաջադրանքի ստուգում «դերային խաղ» մեթոդով: Այնուհետև աշակերտները կատարեցին խմբային աշխատանք « ավելորդ բառ» մեթոդով: Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ երեխաները առաջադրված բառաշարքից պետք է ընտրեն թեմային չառնչվող բառը: Ըստ էության, այս մեթոդի նպատակն է հարստացնել բառապաշարը, ամրապնդել նոր բառերի ճիշտ գրությունն ու սահուն արտասանությունը: Այնուհետև աշակերտներին բաժանեցի խմբերի և տվեցի առաջադրանք օգտագործելով « նկարիր ինքդ» մեթոդը: Աշակերտների մի խումբը նկարում էր մասնագիտությունների հետ կապված նկարներ, մյուս խումբը փորձում էր գուշակել, թե որ նկարը որ մասնագիտությանն է վերաբերում:

Այդ մեթոդն ընտրեցի թեմայի շուրջ աշակերտների պատկերավոր մտածողությունը զարգացնելու համար:

Դիտարկվող 5-րդ դասարանում ունեմ նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտ: Նա տառաճանաչ չէ (ո'չ օտար և ո'չ էլ մայրենի լեզվով), ես նրան սովորեցրել եմ մի քանի բառ, նա կարողանում է մի քանի հարցի պատասխանել:

Վերը նշված մեթոդը շատ աշխատող արդյունավետ մեթոդ է Գարիկի ուսումնառության պրոցեսում: Ես բացահայտել եմ, որ նկարչությունը Գարիկի սիրած զբաղմունքն է, միաժամանակ՝ նրա ուժեղ կողմերից մեկը: Այդ մեթոդի կիրառությունն օգնում է ապահովել Գարիկի ներգրավվածությունը դասին:

Դաս 2

Դասարան - 5-րդ

Ուսուցիչ՝ Հասմիկ Մամյան

Առարկա- Անգլերեն

Թեմա՝ «Earth day»

Դասի տիպը՝ Ամրապնդման դաս

Նպատակը՝ 1.Գիտելիքի համակարգում: Իմանա նոր բառեր և իմաստներ՝

Pollution , save ,litter, air ,water,environment , waste

Իմանա երկիր մոլորակի վտանգված լինելու մասին,

Ինչպես նաև այն «փրկելու» համար կատարվելիք քայլերի մասին:

Արժեքային համակարգ- Աշակերտը պետք է ճանաչի և արժևորի շրջակա միջավայրի կարևորությունը, բնության դերը մեր կյանքում:

Գնահատի բնական ռեսուրսների դերն ու հասկանա դրանց անսպառ չլինելու փաստը:

Ձգտի սիրով և խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին:

Խնդիրները- Զարգացնել բառապաշարը,կապակցված խոսքը, բառանյութի իմացության ամրապնդում:

Մեթոդներ՝

- «Խճանկար / jigsaw /»,

- «Դարակից թափված տառեր»:

Վերջնարդյունք՝

Իմանա համապատասխան տեղեկություններ Երկիր մոլորակին սպառնացող վտանգների մասին:

Սովորի «Pollution , save ,litter, air ,water,environment , waste» «բանալի»

բառերը:

Իմանա նոր գոյականներ և ածականներ:

Կահավորումը-Երկիր մոլորակի պաստառ, մարկեր, թղթեր

Վերլուծություն՝

Դասի կազմակերպական մասից հետո աշակերտներից մեկը ներկայացրեց օրվա փոքրիկ նկարագրությունը անգլերենով: Տնային առաջադրանքը ստուգեցի՝ օգտագործելով «Կանաչ գրչի մեթոդը»: Աշակերտները կարդացին դասը, թարգմանեցին, ներկայացրեցին նաև տեքստի անծանոթ բառերը, որոնք սովորել էին անգիր: Որպես օրվա դասի ամփոփում կատարվեց խմբային աշխատանք ՝ «՛խճանկար ՞- “jigsaw» մեթոդով: Դասարանը բաժանեցի երկու խմբի: Խմբերում աշակերտները տեքստից դուրս գրեցին գոյականները և ածականները: Հետադարձ կապն ապահովելու համար կիրառեցի «դարակից թափված տառեր» մեթոդը: Երեխաներին բաժանեցի կտրտած թղթերին գրված տառեր, որոնց ճիշտ միացնելով պետք է ստանային թեմային առնչվող բառեր: Առաջադրեցի տնային աշխատանք «Our planet and the nature» թեմայով՝ վարժության տեսքով:

Որպես ամփոփում կիրառեցի «Ելքի քարտ» ՝

- նշիր 2 բան,որ սովորեցիր,
- նշիր 2 բան ,որ հետաքրքրեց քեզ,
- նշիր 1 բան,որ մնաց անհասկանալի:

save
sun
artificial
keep
natural
water
grow
plant
animal
forest

save
pollution

Եզրակացություն

Իմ կատարած հետազոտության արդյունքում եկա այն եզրահանգման, որ դասապրոցեսն առավել արդյունավետ է դառնում ակտիվ մեթոդների կիրառման դեպքում: Ակտիվ մեթոդների օգտագործումն իսկապես «շեղում» է երեխաներին ավանդական մեթոդով իրականացվող դասապրոցեսից (հին նյութի հարցում, նոր նյութի ներկայացում): Սովորողին առավել է մոտիվացնում, ակտիվացնում, հետաքրքրված է դարձնում դասի հանդեպ: Հին և նոր նյութի ընկալումը երեխաների համար դառնում է առավել դյուրին, դրա կիրառումը հենց դասասենյակում ակտուալ է դարձնում երեխաների ձեռք բերած գիտելիքի ներկայացումը դասընկերների միջավայրում: Այս ձևաչափով անցկացվող դասապրոցեսում երեխաների ներգրավվածության մակարդակն ավելի է բարձրանում: Կամա թե ակամա շփման մեջ են մտնում նաև ոչ այնքան ջերմ և մտերիմ հարաբերություն ունեցող երեխաները, ովքեր ձգտելով մասնակից լինել ակտիվ դասապրոցեսին, սկսում են իրենց զգալ նկատելիորեն ազատ ու առավել հեշտ և ինքնաբուխ են ցուցաբերում ստացած, յուրացրած գիտելիքները:

Ուսումնասիրելով ակտիվ մեթոդների մասին եղած տեսությունները և կիրառելով իմ դասաժամերին, հասկացա, որ ակտիվ մեթոդների կիրառությունը մեծացնում է երեխաների հետաքրքրությունը առարկայի, գիտելիքի, կրթության և դպրոցի հանդեպ:

Առաջարկություն

Առաջարկում եմ միջին դպրոցում անգլերենի դասաժամերին աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով կիրառել հետևյալ ակտիվ մեթոդները.

- « Ընդունելություն աչքի բժշկի մոտ»
- «Ո՞վ է ավելի արագ»
- « Խառնված բառեր»
- « Դերային խաղ»
- «Ավելորդ բառը»
- «Նկարիր ինքդ»
- «Մտագրոհ»

Վստահեցնում եմ, որ վերոնշյալ մեթոդների տեղին և ճիշտ կիրառությունը կրճատում է ակնկալվող վերջնարդյունքին հասնելու ժամանակը , նպաստում է դասի ժամանակի արդյունավետ կառավարմանը և որ ամենակարևորն է՝ դասից հետո անցած դասից ստացած վառ տպավորությունը մոտիվացնում է նրան դեպի տվյալ առարկայի հաջորդ դասաժամը, աշակերտը մյուս դասին սպասում է նոր ակնկալիքներով:

Օգտագործված գրականություն և հղումներ

Ա.Ե.Տեր-Գրիգորյան«Ուսուցման նոր ձևերի անհրաժեշտությունը» Երևան-1986«Լույս» Ա.Ե.Տեր-Գրիգորյան«Քերականության մեթոդիկա» Երևան-«Լույս»Հրատարակչություն 1977 Մեթոդներ և հնարներ
https://www.facebook.com/noravanschool/photos/a.1383790015208103/2459889937598100/?type=3&locale=ms_MY
Համագործակցային ուսուցում
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5% B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4 «Նախաշավիղ»1-2. 2007
«Նախաշավիղ»6. 2009
Балаев А.А. Активные методы обучения. М., 2006
Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
Выготский Л.С. Педагогическая психология.
Հղում՝
https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
Հղում՝
https://hy.warbletoncouncil.org/aprendizaje-activo-9594